ՄԵԾ ՀՈԿՏԵՄԲԵՐԸ ԵՎ ԱՆԴՐԿՈՎԿԱՍԸ

ԱՐԱՄԱՅԻՍ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

Ռուսաստանի կենտրոններում 1917 թ. Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության հաղթանակի և սովետական պետության կազմավորման ու ամրապնդման ժամանակներում Անդրկովկասի սոցիալ-դասակարգային և ազգային-քաղաքական կացությանը բնորոշ էին մի ամբողջ շարք յուրօրինակություններ, որոնք իրենց կնիքը դրեցին երկրամասում հեղափոխական պայքարի զարգացման ընթացքի վրա և պայմանավորեցին նրա հաղթանակի ձգձգումը մինչև 1920 թ.։

Անդրկովկասում առկա էին սոցիալ-դասակարգային սուր հակասությունները, բանվորական սոցիալիստական լայն շարժումները, սոցիալ-դեմոկրատական-բոլշեիկյան կազմակերպությունների հեղափոխական գործունեությունը և ազգային-ազատագրական շարժումները, որոնց արմատները դեռ խորն էին. ազգային-ազատագրության պրոբլեմները դեռ սպասում էին իրենց լուծմանը։

Անդրկովկասի յուրօրինակություններից մեկն էլ նրա բնակչության գերակշռող մեծամասնության մանր-բուրժուական կազմն էր. բանվոր դասակարգը խիստ փոքրաքանակ էր (բնակչության 4,6%-ը), նրա մի մասն էլ գտնվում էր ազգային մանր-բուրժուական գաղափարախոսության ազդեցության տակ։ Բաքուն՝ Անդրկովկասի բանվորական գլխավոր կենտրոնը, մի օազիս էր՝ շրջապատված մանր-բուրժուական և ազգային խիստ խայտաբղետ տարրերով։

Բնակչության սոցիալ-դասակարգային և ազգային խիստ խայտաբղետության համապատասխան էլ Անդրկովկասում կազմավորվել և գործում էին հասարակական-քաղաքական բազմազան հոսանքներ, կազմակերպություններ և կուսակցություններ, որոնք հանդես էին գալիս իրենց ծրագրերով և գործելակերպով։

Փետրվարյան բուրժուադեմոկրատական հեղափոխության հաղթանակից հետո Ռուսաստանում քաղաքական կուսակցությունների դասակարգումը և դիրքորոշումը հետևյալ պատկերն ուներ[1]*. 1.* միապետականներ *և* օկտյաբրիստներ, *որոնք հանդիսանում էին Ռուսաստանի կալվածատերերի ու խոշոր կապիտալիստների շահերի արտահայտողները, իշխող դիրք ունեին ժամանակավոր կառավարության մեջ և ձգտում էին կասեցնել հեղափոխության հետագա խորացումը, անձեռնմխելի թողնել խոշոր հողատերերի, գործարանատերերի, բանկիրների սեփականությունը. 2.* կադետներ, *որոնք ներկա-*

[1] В. И. Ленин, ПСС, т. 31, стр. 194—199.

յացնում էին ռուսական արդյունաբերական կապիտալի, ֆինանսիստների, բուրժուականացած ազնվականության և հետադեմ մտավորականության կուսակցությունը։ Այդ կուսակցության պարագլուխ Միլյուկովը ժամանակավոր կառավարության արտաքին գործերի մինիստրն էր և հավատարմորեն համագործակցում էր Անտանտի իմպերիալիստների հետ։ Կադետները ձգտում էին հեղափոխությունն ավարտել՝ երկրում հաստատելով սահմանադրական. բուրժուական-պառլամենտական կարգեր. 3. էսէռներ (սոցիալիստ հեղափոխականներ), որոնք հանդիսանում էին գյուղի և քաղաքի մանր բուրժուազիայի ու կուլակության ձգտումների արտահայտիչները։ Էսէռների պարագլուխ Կերենսկին գրավել էր ժամանակավոր կառավարության նախագահի պաշտոնը և իր գործակիցների հետ միասին ամեն բան անում էր՝ վերջ տալու հեղափոխական շարժումները, անձեռնմխելի թողնելու մասնավոր սեփականատիրական իրավակարգը, շարունակելու պատերազմը. 4. սոցիալ-դեմոկրատ մենշևիկյան կուսակցությունը, որը ռուսական առաջին հեղափոխության շրջանում հանդիսանում էր ՌՍԴԲԿ-ի աջ՝ օպորտունիստական թեր, սոցիալիստական հեղափոխության նախապատրաստության շրջանում ամբողջովին սերտաճեց բուրժուական կուսակցությունների հետ, միացավ հակահեղափոխության ուժերին։ Մենշևիզմի պարագլուխներից մեկը՝ Չխեիձեն գործում էր օկտյաբրիստների, կադետների ու էսէռների ղեկավարների հետ։

Վերոհիշյալ չորս քաղաքական կուսակցությունները մտնում էին ժամանակավոր բուրժուական կառավարության մեջ, կազմել էին ուժեղ բլոկ, որն իր բոլոր ուժերն ու հնարավորությունները դործի էր դրել ամրապնդելու բուրժուազիայի դիկտատուրան, ցրելու հեղափոխական կազմակերպությունները։

Միակ հեղափոխական կուսակցությունը բոլշևիկ-լենինյաններն էին, որ կանգնած էին բանվոր դասակարգի, գյուղական չքավորության և մյուս աշխատավորական խավերի շահերի պաշտպանության դիրքերում, հետևողականորեն մերկացնում էին միապետականների, օկտյաբրիստների, կադետների և մանր-բուրժուական էսէռ-մենշևիկյան բլոկը, նրա համագործակցությունն Անտանտի իմպերիալիստների հետ, առաջ քաշելով սոցիալիստական հեղափոխության խնդիրները, աշխատավորներին կազմակերպելով և նոր պայքարի կոչելով այդ խնդիրները կենսագործելու համար։

Ռուսաստանի բոլշևիկ-լենինյանների կուսակցությունը Անդրկովկասում ուներ ուժեղ կազմակերպություն, որն իր շարքերում համախմբել էր վրաց, հայ, ռուս, ադրբեջանական և մյուս ազգերի աշխատավորության ներկայացուցիչներին, նրանց ուժերը միավորել պրոլետարական ինտերնացիոնալիզմի հիմքի վրա և աշխատում էր երկրամասի ժողովուրդներին տանել Ռուսաստանի բանվոր դասակարդի հեղափոխական պայքարի ուղիով։

Անդրկովկասը հասարակական-քաղաքական տեսակետից խայտաբղետ պատկեր ուներ. համառուսական բուրժուական և մանր-բուրժուական կուսակցությունների մասնաճյուղերից բացի՝ այնտեղ ձևավորվել և գործում էին ադրբեջանական, հայկական և վրացական ազդային քաղաքական կուսակցություններ, բանվորների և գյուղացիների դեպուտատների սովետներից բացի կազմվել էին նաև ազգային խորհուրդներ, որոնք իրենց դրոշմն էին դնում երկրամասում տեղի ունեցող սոցիալ-քաղաքական իրադարձությունների վրա։

Այսպես, օրինակ, Վրաստանում մեծ ազդեցություն ունեին վրացական մենշևիկները, որոնք 1917 թ. հունիսին իրենց մարզային համագումարում

հայտարարեցին, թե վրացական մենշևիկները լիովին պաշտպանում են ժամանակավոր կառավարության քաղաքականությունը, պահանջում են «վրացական տեղական ինքնավարություն»՝ Ռուսաստանի պառլամենտական հանրապետության կազմում[2]։

Բոլշևիկների ապրիլյան կոնֆերանսում Ֆ. Մախարաձեն իր ելույթում նշեց, որ «Թիֆլիսը կարելի է համարել մենշևիկների կենտրոն ոչ միայն Կովկասի, այլև ամբողջ Ռուսաստանի համար»[3]։ Այսպիսով, 1917 թ. գարնանը վրացական մենշևիկները հանդես էին գալիս Ռուսաստանի և Վրաստանի պարգացման բուրժուական ուղու պաշտպանությամբ, կտրականապես մերժելով սոցիալիստական վերափոխությունների ծրագրերը։ Գրեթե նույն ժամանակներում կազմավորվեց վրացական նացիոնալ-դեմոկրատական կուսակցությունը, որը համալրվեց ազնվականներով, բուրժուականացած կալվածատերերով, առևտրականներով, հոգևորականներով և մտավորականներով։ Այդ կուսակցությունն ապդարարեց, որ պաշտպանելու է «մասնավոր սեփականության անձեռնմխելիության» սկզբունքը[4]։ Վրաստանում ակտիվ գործունեություն էր ծավալում նաև «սոցիալիստ-ֆեդերալիստների» կամ պարզապես «վրացական ֆեդերալիստների» կուսակցությունը, որի բաղձանքն էր ստեղծել «վրացական ինքնավարություն»՝ բուրժուական Ռուսաստանի հետ համագործակցության հիմունքներով[5]։

Այսպիսով, վրացական ազգային երեք ազդեցիկ կուսակցություններն էլ կանգնած էին ժամանակավոր կառավարության հետ համագործակցելու դիրքերում և մերժում էին սոցիալիստական հեղափոխության անհրաժեշտությունը։

Հայկական ազգային կուսակցությունները՝ դաշնակցությունը և հայ ժողովրդական կուսակցությունը ևս դեմ դուրս եկան սոցիալիստական հեղափոխությանը։ Հայ ժողովրդական կուսակցության կամ միևնույն է հայ կադետների ներկայացուցիչ Պապաջանովը մտնում էր ժամանակավոր կառավարության Անդրկովկասյան հատուկ կոմիտեի (Օզակոմի) մեջ։ Դաշնակցություն կուսակցությունը 1917 թ. սեպտեմբերին Թիֆլիսում գումարեց իր հերթական համաժողովը, որը վերահաստատեց նրա ծրագիրը։ Նրանում նախատեսվում էր կազմավորել «Անդրկովկասյան ռամկավար հանրապետություն, որը պիտի կազմի Ռուսաստանի հանրապետության անբաժան մասը» և «անկախ լինի» միայն «իր ներքին գործերի մեջ»[6]։ Նույն ծրագրում ասվում էր, որ «Թուրքահայաստանը պիտի կազմի օսմանյան սահմանադրական պետության անբաժան մասը՝ հիմնված տեղական լայն ինքնավարության վրա»։ Բուրժուական այդպիսի նպատակներ առաջադրելով, դաշնակցությունը դրսևորեց իր հակահեղափոխական էությունը։

Անդրբեջանական քաղաքական կուսակցությունների դիրքորոշումը դեպի ռուսական հեղափոխությունը ուներ հետևյալ պատկերը. փետրվարյան բուր-

---

2 «Возрождение», 22.VI.1917.

3 «Седьмая (Апрельская) Всероссийская конференция РСДРП(б)», протоколы, стр. 161.

4 «Национально-демократическая партия Грузии», программа, Кутаиси, 1917, стр. 12.

5 «Революция и национальный вопрос», документы, т. 3, М., 1930, стр. 397.

6 «Ծրագիր հայ հեղափոխական դաշնակցության», Թիֆլիս, 1917, էջ 23։

ժուա-դեմոկրատական հեղափոխությունից հետո մուսավաթականներն անմիջապես հանդես եկան «համազգային» շահերի պաշտպանության լոզունգներով, պահանջեցին «Ադրբեջանի, Թուրքեստանի, Բաշկիրիայի... և բոլոր թուրքական ժողովուրդների ինքնավարություն...» և «Ռուսաստանի բոլոր մուսուլմանների միություն... մուֆտիաթի գլխավորությամբ»[7]։ 1917 թ. մարտին Գյանջայում (Կիրովաբադ) տեղի ունեցավ Ադրբեջանի բեգերի, կալվածատերերի և ազգայնական մտավորականության ներկայացուցիչների համաժողով, որը քննեց «մուսուլմանների միասնության հարցը»։ Ադրբեջանական հարուստ վերնախավերի պարագլուխները որոշեցին ստեղծել նոր կազմակերպություն՝ «Թուրֆ ֆեդերալիստների» կուսակցություն, որը առաջարկեց մուսավաթականներին՝ միավորել իրենց ուժերը։ 1917 թ. հունիսին երկու կուսակցությունները միացան և կոչվեցին «Մուսավաթ-թուրֆական ֆեդերալիստների կուսակցություն», որը հանդես եկավ ադրբեջանական բեգերի, կալվածատերերի և կապիտալիստների շահերի պաշտպանությամբ, բացահայտ թշնամանք դրսևորելով դեպի սոցիալիստական ամեն մի շարժում։

Բուրժուակալվածատիրական այդ հակաժողովրդական կուսակցություններին հակադիր դիրքերում էր գործում «Հումմեթ» մուսուլմանական սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունը։ Այդ կազմակերպությունն ստեղծվել էր դեռևս ռուսական առաջին հեղափոխության տարիներին՝ ՌՍԴԲԿ Բաքվի կոմիտեին կից։ Նրա նպատակն էր մահմեդական աշխատավորներին հաղորդակից դարձնել հեղափոխական շարժումներին, պայքար մղել պանիսլամիստական գաղափարների դեմ։ 1917 թ. «Հումմեթը» վերջնականապես բաժանվեց երկու մասի՝ հեղափոխական հումմեթիստներ, որոնք քննադատում էին մուսավաթական, թուրք-ֆեդերալիստական, պանիսլամիստական տարրերին, պաշտպանում բոլշևիկյան գործելակերպը և ի վերջո միացան Բաքվի կոմունիստական կազմակերպությունների հետ, և օպորտունիստական-մենշևիկյան թևի, որին հարողները գործում էին էսէռների ու մենշևիկների հետ, կանգնած էին ժամանակավոր կառավարությանն օժանդակողների շարքում և դեմ էին սոցիալիստական հեղափոխությանը։ Վերը նշված ազգայնական կուսակցությունների ղեկավարության ներքո ստեղծվել և գործում էին մուսուլմանական, հայկական և վրացական ազգային խորհուրդները, որոնք ձգտում էին դառնալ ազգային-բուրժուական կառավարչական օրգաններ։ Անդրկովկասի սոցիալ-քաղաքական դրության այս յուրօրինակությունը՝ բազմակուսակցականությունը, ջլատում էր տարբեր ազգերի աշխատավորների դասակարգային համերաշխությունը և հող պատրաստում ստեղծելու հակահեղափոխական բլոկ, որին ոգեշնչում էին նաև արտաքին ուժերը՝ թուրքա-գերմանական և Անտանտի իմպերիալիստները։

1917 թ. հոկտեմբերի 25—27-ին Պետրոգրադում կատարված սոցիալիստական հեղափոխական վերափոխությունները և այնուհետև սովետական իշխանության հաղթական երթը (1917 թ. վերջերից մինչև 1918 թ. կեսերը) դեպի Ռուսաստանի տարբեր նահանգներն ու ծայրամասային մարզերը մեծ ազդեցություն ունեցան նաև Անդրկովկասի ժողովուրդների սոցիալ-դասակարգային և ազգային-քաղաքական հարաբերությունների զարգացման ընթացքի վրա։ Անմիջապես կազմավորվեցին պայքարի երկու գլխավոր ուղղություններ,

---

[7] «Каспий», 1917, № 109, 110.

որոնցից մեկը դիրքորոշվեց դեպի մեծ Հոկտեմբերի ծնունդ Ռուսաստանը, նոր ստեղծված սովետական պետությունը, իսկ մյուսը՝ դեպի Ռուսաստանում տապալված, հին, մեռնող ուժերը և նրանց հարություն տալու ձիգեր գործադրող օտարերկրյա իմպերիալիստական պետությունները։ Այդ երկու ուղղությունների միջև ծավալված պայքարը կազմեց Անդրկովկասի սոցիալ-քաղաքական զարգացման գլխավոր գիծը, որը կփորձենք քննել համառոտակի։

1917 թ. հոկտեմբերի 25—27-ին Թիֆլիսում, Բաքվում և Անդրկովկասի մյուս կենտրոններում հայտնի դարձավ Պետրոգրադում սկսված զինված ապստամբության, ժամանակավոր կառավարության անկման, սովետների համառուսաստանյան II համագումարի որոշումների և Վ. Ի. Լենինի գլխավորությամբ ժողովրդական կոմիսարների սովետ կազմելու մասին։

Թիֆլիսի սովետի գործկոմը, որի ղեկավարներն էին Ն. Ժորդանիան, Ե. Գեգեչկորին և Ի. Մերեթելին, հոկտեմբերի 25-ին հրավիրեց նիստ և քննարկեց Պետրոգրադում սկսված ապստամբության նկատմամբ վերաբերմունքի հարցը։ Սովետի բոլշևիկյան ֆրակցիան ներկայացրեց որոշման նախագիծ, որով առաջարկվում էր «ողջունել և պաշտպանել Պետրոգրադի պրոլետարիատի ապստամբությունը, ամբողջ իշխանությունը հանձնել սովետներին»[8]։ Թիֆլիսի սովետի գործկոմը մերժեց բոլշևիկների առաջարկը և ուղիղ հեռագրագծով ժամանակավոր կառավարությանը հաղորդեց, թե անհրաժեշտ է «խաղաղ ճանապարհով լիկվիդացնել ապստամբությունը»։ Նույն օրը գումարվեց բանվորների, զինվորների ու գյուղացիների երկրային սովետի և Թիֆլիսի սովետի համատեղ նիստը, որտեղ մեծամասնությունը կազմում էին մենշևիկները։ Լսվեց հենց նոր Պետրոգրադից վերադարձած Ի. Մերեթելու հաղորդումը։ Մենշևիկյան սովետը դատապարտեց բոլշևիկների ապստամբությունը և որոշեց ստեղծել «Հասարակական անվտանգության Անդրկովկասյան կոմիտե»։ Բոլշևիկյան ֆրակցիան դատապարտեց այդ որոշումը և հեռացավ նիստից։ Մենշևիկների և էսէռների կազմած բլոկին միացավ Թիֆլիսի մուսավաթական կենտրոնը և մուսուլմանական խորհուրդը։ Այդ գործարքի մասին տեղյակ էին և այն օրհնում էին նաև կովկասյան բանակի սպիտակգվարդիական գեներալները։

Բոլշևիկների կովկասյան երկրային կոմիտեի և Թիֆլիսի քաղաքային կազմակերպության ղեկավարների համար պարզ դարձավ, որ բանվորների, զինվորների ու գյուղացիների դեպուտատների երկրային սովետը և Թիֆլիսի սովետը համագործակցելով մուսուլմանական խորհրդի և կովկասյան բանակի ռեակցիոն գեներալների հետ, դարձել է հակահեղափոխական ուժերի հենարան և բացահայտ թշնամական դիրքորոշում ունի դեպի Պետրոգրադի հոկտեմբերյան իրադարձությունները։ Որոշվեց պայքարի կենտրոնը փոխադրել զինվորների, բանվորների և գյուղացիների կոլեկտիվները։

Բոլշևիկների կովկասյան երկրային կոմիտեի զինվորական կազմակերպության բյուրոն որոշեց կոչ տպել և ցրել զորքի մեջ։ Կոչը կազմեց բյուրոյի նախագահ Գրիգոր Կորգանովը (Ղորղանյանը)։ Կորգանովի կազմած կոչը հասցվեց Թիֆլիսի զինանոցի զինվորներին. «Ոչ մի հրացան, ոչ մի գնդացիր, ոչ մի հրանոթ ձեռքից բաց չթողնել—ասված էր այդ պատմական փաստաթղթում։— Չկատարել ոչ մի հրաման զորամասերի զինաթափման կամ վե-

[8] «Известия... Тифлисского Совета», 31.X.1917.

բակազմելու մասին... բոլոր սվինները, բոլոր փամփուշտները, բոլոր գնդացիրները և հրանոթները պետք է օգտագործել բանվորների, զինվորների, նավաստիների և գյուղացիների թշնամիների դեմ, հեղափոխության թշնամիների դեմ...»[9]։ Այդ օրերին էլ բոլշևիկները կազմակերպեցին Թիֆլիսի զինանոցի զինվորների, բանվորների և ծառայողների ժողով, որին մասնակցում էր մինչև 2000 մարդ։ Ժողովը ողջունեց Պետրոգրադի բանվորների և զինվորների ապստամբության հաղթանակը և հայտարարեց, որ «Պետրոգրադում սովետների համառուսաստանյան համագումարի ձևավորած կառավարությունը հանդիսանում է բանվորների, զինվորների և գյուղացիների կառավարությունը, որի պաշտպանության համար մենք երդվում ենք կանգնել երկաթյա պարսպի նման, ընդդեմ բուրժուազիայի հակահեղափոխական բոլոր ուժերի և նրանց ծառաների»[10]։

Զինանոցը դարձավ հեղափոխական ուժերի մի կարևոր հենարան։

Բոլշևիկները որոշում են ի հակակշիռ Թիֆլիսի մենշևիկյան սովետի, ստեղծել բոլշևիկյան սովետ։ Այդ նպատակով Թիֆլիսի կայազորի 36 զորամասերում և ստորաբաժանումներում, ինչպես նաև մի շարք ձեռնարկություններում տեղի են ունենում պատգամավորների ընտրություններ։ Հոկտեմբերի 28-ին պատգամավորները հավաքվում և կազմում են նոր մարմին, որը կոչվում էր «դելեգատների ժողով»։ Այդ ժողովը կոչված էր կատարելու բանվորների և զինվորների Թիֆլիսի սովետի դերը և դառնալու հեղափոխության օրգան։

Այժմ տեսնենք, թե հեղափոխության լուրն ինչպես ընդունվեց Բաքվում։ Հոկտեմբերի 26-ին տեղի ունեցավ բանվորների և զինվորների դեպուտատների Բաքվի սովետի գործկոմի նիստ, որտեղ սովետի նախագահ Ստ. Շահումյանը հանդես եկավ Պետրոգրադի իրադարձությունների մասին զեկուցումով, առաջարկելով ողջունել Պետրոգրադի պրոլետարիատի հաղթանակը և Բաքվում ևս ամբողջ իշխանությունը վերցնել սովետի ձեռքը։ Այդ առաջարկին ընդդիմացան սովետի գործկոմի կազմում եղած մենշևիկները, էսէռները և դաշնակցականները։ Նրանք առաջարկեցին Բաքվում ստեղծել կոալիցիոն մարմին՝ «հասարակական անվտանգության կոմիտե», որին հանձնել իշխանությունը, իսկ Պետրոգրադում բռնկված ապստամբությունը լիկվիդացնել «խաղաղ միջոցներով», «առանց հիվանդագին հետևանքների»[11]։ Բոլշևիկների բանաձևը այստեղ ևս չանցավ։ Որոշվեց հարցը քննարկման դնել Բաքվի բանվորների և կայազորի զինվորների առջև, բացատրել Պետրոգրադում տեղի ունեցած հեղափոխության հաղթանակի կարևոր արդյունքները, նրանց ոտքի հանել Բաքվում սովետական իշխանություն հաստատելու համար։

Հոկտեմբերի 31-ին հրավիրվեց Բաքվի սովետի ընդլայնված նիստ՝ դեպուտատների և բանվորական կոլեկտիվների ու կայազորի հեղափոխական զորամասերի ներկայացուցիչների մասնակցությամբ։ Այս անգամ Բաքվի սովետը ձայների գերակշռող մեծամասնությամբ պաշտպանեց բոլշևիկների առաջարկը, իր լիակատար համերաշխությունը հայտնեց «Պետրոգրադում և ամբողջ Ռուսաստանում տեղի ունեցող հեղափոխական վերակազմություններին», կանդնեց «նոր, ժողովրդական իշխանության կողմը», որոշում կայաց-

9 «Кавказский рабочий», 8.XI.1917.

10 Նույն տեղում, 29. X. 1917։

11 «Знамя труда», 29.X.1917.

ոնց «Բաքվում և նրա շրջանում իշխանությունը վերցնել սովետի ձեռքը»[12]։ Բաքուն դարձավ Անդրկովկասում առաջին սովետական քաղաքը և մի հենարան՝ ամբողջ երկրամասում սովետական կարգերի հաստատման համար մղվող պայքարում։

Հոկտեմբերի ալիքները տարածվեցին նաև Հայաստանում և Անդրկովկասի մյուս մասերում։ Հայկական բոլշևիկյան մամուլի էջերում սկսեցին տպագրվել լենինյան ժողկոմսովետի դեկրետներն ու որոշումները։ Հայ ժողովրդի լայն զանգվածները իրենց սրտին առանձնապես մոտ ընդունեցին «խաղաղության հրովարտակը»[13], որի մեջ դատապարտվում էր մեծ և ուժեղ պետությունների կողմից փոքր և թույլ ազգերի իրավունքների ոտնահարումը, նրանց ճնշումը և բռնագաղթի ենթարկելը կամ գենոցիդը։

Ինչպես երկրամասի մյուս քաղաքներում, 1917 թ. նոյեմբերին Երևանում, Ալեքսանդրապոլում, Կարսում, Սարիղամիշում, Ջալալօղլիում և Հայաստանի ուրիշ քաղաքներում ու շրջաններում ևս տեղի ունեցան աշխատավորների և բանակի տեղական կայազորների ներկայացուցիչների համատեղ ժողովներ ու միտինգներ, որտեղ ընդունվում էին որոշումներ՝ Պետրոգրադում ստեղծված ժողկոմսովետին ողջունելու, նրա հռչակած դեկլարացիաներին և դեկրետներին հավանություն տալու մասին։ 1917 թ. նոյեմբերի 10-ին Ալեքսանդրապոլում տեղի ունեցած միտինգին ներկա է եղել մինչև 5000 մարդ։ Այնտեղ ընդունված բանաձևում նշված է, թե Հայաստանի աշխատավորները գոհունակությամբ իմացան Կերենսկու բուրժուական կառավարությունը տապալելու և բանվորների, զինվորների ու գյուղացիների դեպուտատների սովետի կառավարություն ստեղծելու մասին։ «Մենք,— ասված է բանաձևում,— ողջունում ենք համաշխարհային-պրոլետարական հեղափոխության առաջնորդ ընկեր Լենինին, որը հանդիսանում է քաղաքի և գյուղի չքավորության փորձված պաշտպանը»[14]։ Այդ ոգով բանաձևեր ընդունվեցին նաև Հայաստանի ուրիշ բնակավայրերում։ Հայ աշխատավորության լայն զանգվածները փարվեցին Հոկտեմբերի դրոշին։

Սոցիալիստական հեղափոխությունը լայն արձագանք գտավ կովկասյան ռազմաճակատի զորքերի մեջ։ Ոչ միայն Թիֆլիսի, Բաքվի, Երևանի, Ալեքսանդրապոլի, Սուխումիի, Բաթումիի և այլ կայազորներում, այլև ռազմաճակատի ամենահեռավոր հատվածներում եղած զորամասերի և թիկունքային ծառայությունների հիմնական մասը սրտանց ողջունեց Հոկտեմբերյան հեղափոխությունը, մանավանդ հաշտության և հողի մասին դեկրետները։

Այսպիսով, Անդրկովկասում 1917 թ. հոկտեմբերի վերջին և նոյեմբերին բանվորների, զինվորների և գյուղացիների գիտակից, կազմակերպված մասը համախմբվեց բոլշևիկների շուրջը և պայքարի ելավ երկրամասում սովետական իշխանություն հաստատելու, մեծ Հոկտեմբերի հռչակած սոցիալիստական վերափոխությունների ծրագրերն իրականացնելու համար։

Սակայն հակասովետական ուժերը համախմբվում էին և գործում մոլեգնորեն։ 1917 թ. նոյեմբերի 11-ին Թիֆլիսում հավաքվեցին Անդրկովկասյան հատուկ կոմիտեի անդամները, «հասարակական անվտանգության կոմիտեն»

---

12 «Известия Совета... Бакинского района», 2.XI.1917.

13 «Բանվորի կռիվը», 13. XI. 1917։

14 «Кавказский рабочий», 25.XI.1917.

ինքնակոչ մարմինը, մենշևիկների, մուսավաթականների, դաշնակցականների, աջ-հումմեթիստ-մուսուլման սոցիալիստների, էսէռների պարագլուխները, Կովկասյան ռազմաճակատի հրամանատար գեներալ Պրժևալսկին և ռազմաճակատի շտաբում գործող անգլիական ու ֆրանսիական զինվորական կցորդներ Շորն ու Շարգենը, ամերիկյան հյուպատոս Սմիտը և քննարկեցին Անդրկովկասում քաղաքական իշխանության հարցը։ Բոլշևիկների երկրային կոմիտեի ներկայացուցիչներ Մ. Ցխակայան, Հ. Նազարեթյանը և Ֆ. Մախարաձեն խորհրդակցությունում հրապարակեցին երկրկոմի դեկլարացիան, պահանջելով ճանաչել Պետրոգրադում ստեղծված ժողկոմսովետի իշխանությունը, իսկ Անդրկովկասում հաստատել սովետական իշխանություն[15]։ Այդ առաջարկը մերժվեց և բոլշևիկների պատվիրակությունը հեռացավ խորհրդակցությունից։ Հյուպատոս Սմիտի հովանավորյալ մենշևիկ, մուսավաթական, դաշնակցական և էսէռական պարագլուխների ճառերը թույն էին թափում մեծ Հոկտեմբերի մարտիկների վրա, մերժում սոցիալիստական վերափոխությունների անհրաժեշտությունը, պահանջելով, որ Անդրկովկասը գնա ոչ թե Պետրոգրադի ապստամբների բացած սովետական ուղիով, այլ իր «ուրույն ճանապարհով» և ստեղծի Անդրկովկասյան բուրժուական հանրապետություն։ Չորսօրյա վեճերից հետո նոյեմբերի 15-ին ստեղծվեց «Անդրկովկասյան կոմիսարիատ», որն իրեն հորջորջում էր որպես «Անդրկովկասյան հանրապետության» «կառավարություն»։ Նրա կազմի մեջ մտան մենշևիկյան լիդերներ Գ. Գեգեչկորին (նախագահ), Ա. Չխենկելին, դաշնակցականներ Հ. Օհանջանյանը, Ա. Կարճիկյանը, մուսավաթականներ Խան-Խոյսկին, Մ. Ջաֆարովը, Մելիք-Ասլանովը, էսէռներ Դ. Դոնսկոյը, Ա. Ներուչևը և ուրիշներ, որոնք բուրժուա-ազգայնական կուսակցությունների բոլոր ուժերը նպատակամղեցին ընդդեմ սոցիալիստական հեղափոխության։

Անդրկովկասի սոցիալ-դասակարգային, ազգային և քաղաքական ուժերը վերջնականապես վերախմբավորվեցին երկու բանակների—հակասովետական բլոկ՝ «Անդրկովկասյան կոմիսարիատի» գլխավորությամբ և սովետական կարգերի համար մարտնչող մասսաներ, որոնց կազմակերպում և ղեկավարում էին բոլշևիկյան կազմակերպությունները։

Հակասովետական բլոկը ոչ մի միջոցի առաջ կանգ չէր առնում՝ արգելակելու սոցիալիստական հեղափոխության տարածումն Անդրկովկասում, երկրամասն անջատելու սովետական Ռուսաստանից, այնտեղ հաստատելու բուրժուազիայի դիկտատուրա։ Կոմունիստական կազմակերպությունները մեծագույն ջանքեր էին գործի դնում անխախտ պահելու Անդրկովկասի աշխատավորների հեղափոխական միասնությունը ռուս բանվոր դասակարգի հետ և ընթանալու նրա ցույց տված սովետական ուղիով։

1917 թ. դեկտեմբերի 10—23-ին Թիֆլիսում գումարվեց Կովկասյան ռազմաճակատի զինվորական համագումարը, որին ղեկավար մասնակցություն ունեցան Ստ. Շահումյանը, Մ. Ցխակայան, Գր. Կորգանովը, Ս. Քաֆթարաձեն և բոլշևիկյան ուրիշ գործիչներ։ Չնայած մենշևիկների և էսէռների նյութած դավերին, համագումարը մեծամասնությամբ գնաց բոլշևիկների հետևից, ողջունեց Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակը Ռուսաստանում և ընդունեց որոշում՝ ամբողջ Անդրկովկասում իշխանությունը սովետնե-

15 Նույն տեղում, 15. XI. 1917։

ին հանձնելու մասին։ Ընտրվեց Կովկասյան բանակի (ռազմաճակատի) դինվորական դեպուտատների երկրային սովետ, իսկ վերջինս ընտրեց Կովկասյան բանակի գործադիր մարմին՝ ռազմահեղափոխական կոմիտե, Գր. Կորգանովի նախագահությամբ։ Մամուլում սկսեցին տպագրվել ռազմահեղափոխական կոմիտեի հրամաններն՝ ուղղված ռազմաճակատի զորքերին, պահանջելով անհապաղ ստեղծել կորպուսների, դիվիզիաների, գնդերի և բոլոր կայազորների ռազմահեղափոխական կոմիտեներ և ամբողջ ճակատում՝ Տրապիզոն— Էրզրում— Սարիղամիշ— Կարս— Վան— Բիթլիս, Համադան— Թավրիզ—Էնգելի, իշխանությունը վերցնել ռազմահեղափոխական կոմիտեների ձեռքը[16]։ Միաժամանակ Գր. Կորգանովը հրապարակեց կոչ, ուղղված ճակատի զորքերին, խնդիր դնելով «ազգային գնդերի» փոխարեն, որ ստեղծում էին բուրժուական ազգայնականները, կազմակերպել կովկասյան ինտերնացիոնալ կարմիր բանակի զորքեր[17]։ 1917 թ. դեկտեմբերի 16-ին Ժողովրդական կոմիսարների սովետը Վ. Ի. Լենինի առաջարկությամբ որոշեց բոլշևիկների կուսակցության Կենտկոմի անդամ և Բաքվի սովետի նախագահ Ստ. Շահումյանին նշանակել Կովկասի գործերի արտակարգ ժամանակավոր կոմիսար՝ մինչև ամբողջ երկրամասում սովետական կարգերի լիակատար հաղթանակը և երկրամասի սովետական իշխանության մարմնի ստեղծումը։ Ստ. Շահումյանն անմիջապես ժամանեց Թիֆլիս և ձեռնամուխ եղավ իր պարտականությունների կատարմանը։ Նա այնտեղ սկսեց հրատարակել «Кавказский вестник Совета Народных комиссаров» մեծածավալ թերթը, որի էջերում տպվեցին արտակարգ կոմիսարի դեկլարացիաներն ու հոդվածները, որոնցում բացատրվում էին Անդրկովկասում Սովետական Ռուսաստանի կառավարության կիրառելիք քաղաքականության հիմնական սկզբունքները և երկրամասում սովետական իշխանություն կազմակերպելու կոնկրետ խնդիրները։

Թիֆլիսում ստեղծվել էր մի իրադրություն, որի ելքը կարող էր որոշել հեղափոխության և հակահեղափոխության ուժերի զինված գոտեմարտը։ Սակայն կովկասյան բոլշևիկների կենտրոնը, ինչպես իրավացիորեն նշել է նրա ղեկավարներից մեկը՝ Մ. Օրախելաշվիլին, տատանվեց, խուսափեց զինված ելույթի տակտիկա կիրառելուց, հույս ունենալով, թե կարելի է խաղաղ միջոցներով հաղթել հակասովետական բլոկին և գրավել իշխանությունը[18]։

Անդրկովկասյան կոմիսարիատը հակասովետական բլոկի բոլոր ուժերը նետեց բոլշևիկների և նրանց համակրող բանվորների ու զինվորների դեմ։ Մենշևիկյան գվարդիայի զորամասերը հարձակվեցին զինանոցի վրա, գրավեցին այն և ջախջախեցին հեղափոխական կայազորը։ 1918 թ. հունվարի 9—12-ին մուսավաթական և մենշևիկյան ջոկատները Շամխոր կայարանի շրջանում հարձակում գործեցին ռուս զինվորների էշելոնների վրա, սպանեցին հազարավոր ռազմիկների, կողոպտելով նրանց զենքը և ունեցվածքը, Անդրկովկասյան կոմիսարիատի հրամանով ոստիկանները ներխուժեցին բոլշևիկների երկրկոմի տպարանը և ջախջախեցին այն, փակեցին «Кавказский рабочий», «Բանվորի կռիվը» ու «Բրձոլա» թերթերը։ Ստ. Շահումյանին հրա-

---

16 «Известия РВК кавармии», 15.I.1918.

17 «Кавказский рабочий», 21.I.1918.

18 М. Орахелашвили, Закавказские большевистские организации в 1917 году, Тифлис, 1927, стр. 52—53.

ման տրվեց անմիջապես հեռանալ Անդրկովկասի սահմաններից։ Մի քանի օր անց ստորագրվեց օրդեր՝ Ստ. Շահումյանի, Ֆ. Մախարաձեի, Մ. Ցխակայայի, Դ. Շահվերդյանի և ուրիշ բոլշևիկ գործիչների ձերբակալման մասին[19]։ Այդ գործիչներն անցան անլեգալ գրության և հեռացան Թիֆլիսից։ Անդրկովկասյան կոմիսարիատը 1918 թ. փետրվարին Թիֆլիսում հավաքեց Անդրկովկասից ընտրված Սահմանադիր ժողովի մենշևիկ, մուսավաթական, դաշնակցական, էսէռ ու մենշևիկ-հումմեթիստ պատգամավորներին և նրանցից ձևավորեց Անդրկովկասյան սեյմ, որը դարձավ հակասովետական բլոկի մի նոր կենտրոն։

Չնայած հակասովետական բլոկի ձեռնարկած կատաղի հալածանքներին և հետապնդումներին, մեծ Հոկտեմբերի գաղափարներով տոգորված մարտիկները շարունակում էին անդուլ պայքարը։ Թիֆլիսը թողնելով, Բաքու փոխադրվեցին Կովկասի գործերի արտակարգ կոմիսար Ստ. Շահումյանը, Կովկասյան բանակի ռազմահեղափոխական կոմիտեն՝ Գր. Կորգանովի գլխավորությամբ։ Բաքվում կենտրոնացան Անդրկովկասի գլխավոր հեղափոխական ուժերը և զինված ջոկատները, հեղափոխական զորքի առաջին գումարտակները։ 1918 թ. մարտյան-ապրիլյան կռիվներում Բաքու քաղաքում հեղափոխության ուժերը ջախջախեցին հակասովետական բլոկի ուժերին։

Բաքվում ստեղծվեց ժողովրդական կոմիսարների սովետ՝ Բաքվի կոմունան, որի գլուխ կանգնած էին Ստ. Շահումյանը, Ալ. Ջափարիձեն, Գր. Կորգանովը, Մ. Աղիզբեկովը, Ն. Նարիմանովը, Ի. Ֆիոլետովը և ուրիշներ։ Չորս ամիս դեմ առ դեմ կանգնել էին Բաքվի կոմունայի զինված ջոկատները՝ մեծ Հոկտեմբերի դրոշակակիրները և հակասովետական բլոկի սև ուժերը։ Կոմունայի պաշտպանների դեմ էին դալիս թուրքական դիվիզիաները, անգլիական էքսպեդիցիոն զորամասերը, մուսուլմանական կորպուսի հորդաները, թիկունքից գավում էին էսէռա-մենշևիկյան, դաշնակցական և մուսավաթական դավաճանները։ Կոմունայի պաշտպանները դիրքերում հաճախ մնում էին առանց հացի և ջրի, կերակրվում էին յուրաքանչյուրը մի բուռ չամիչով և մի քանի ընկույզով, արյունաքամ էին լինում և հյուծվում, բայց ձեռքներից բաց չէին թողնում մեծ Հոկտեմբերի դրոշը։ Դա հիրավի մի առասպելական հերոսամարտ էր անհավասար ուժերի միջև։ Կոմունան ընկավ, բայց նրա բարձրացրած դրոշը՝ մեծ Հոկտեմբերի խորհրդանիշը, մնաց անպարտելի, պայքարի կոչեց նորանոր դրոշակակիրների։

Ընդդիմանալով Հոկտեմբերի բացած սովետական ուղուն, Անդրկովկասի հակահեղափոխական կուսակցությունները, կազմալուծելով ճակատը թուրքական օկուպանտների առաջ և պարտություն կրելով նրանցից, 1918 թ. մայիսին ստեղծեցին Վրաստանի, Ադրբեջանի և Հայաստանի բուրժուական հանրապետությունները։ Այդ հանրապետություններում երկրի ներքին սոցիալական կյանքում անխախտ թողնվեց խոշոր հողատերերի, գործարանատերերի և գյուղի կուլակային վերնախավերի սեփականատիրությունը, պահպանվեց շահագործող դասակարգերի արտոնյալ վիճակը։ Երեք հանրապետություններում էլ բուրժուական կառավարություններն ու պառլամենտները արմատական փոփոխություններ չմտցրին օրենսդրության մեջ, կիրառում էին

---

[19] «Очерки истории коммунистических организаций Закавказья». ч. I. Тбилиси, 1967, стр. 395

ժամանակավոր կառավարության, իսկ շատ հարցերում նաև ցարական օրենքները։ Պատմական փորձը ցույց տվեց, որ մենշևիկյան, դաշնակցական և մուսավաթական կուսակցությունները՝ անկախ իրենց ծրագրերում եղած այս կամ այն կիսասոցիալիստական դեմագոգիկ պահանջներից, ամբողջովին կանգնեցին բուրժուական կացութաձևի դիրքերում, մերժելով Հոկտեմբերյան հեղափոխությամբ հռչակված սոցիալական ամեն մի վերափոխություն։

Արտաքին հարաբերությունների մեջ Հայաստանի, Ադրբեջանի և Վրաստանի բուրժուական կառավարությունները, հակադրվելով Սովետական Ռուսաստանին, քաղաքական կապեր հաստատեցին օտարերկրյա իմպերիալիստների և ռուսական սպիտակգվարդիական գեներալների հետ։ Վ. Ի. Լենինը 1918 թ. հունիսի 23-ին Մոսկվայում արտասանած ճառի մեջ հայտարարեց, որ «կովկասյան մենշևիկները դաշինք են կնքել թուրքական իմպերիալիզմի հետ»[20]։

Քառյակ միության և Անտանտի իմպերիալիստները տեսնում և զգում էին, որ Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակն Անդրկովկասում այդ երկրամասը դուրս կբերի իմպերիալիզմի շղթայից, ուստի ամեն ինչ անում էին Ադրբեջանում, Հայաստանում և Վրաստանում բուրժուա-ազգայնական կառավարությունները պահպանելու համար։

Սակայն մեծ Հոկտեմբերի գաղափարների ազդեցությունն օրեցօր ավելի լայն էր տարածվում Ադրբեջանի, Հայաստանի և Վրաստանի աշխատավորների մեջ։ Բուրժուական կառավարությունների ձախողումը և սովետական իշխանության հաղթանակը բնապատմական պրոցես էր, հասարակական զարգացման օրինաչափություն, որը ոչ մի ուժ չէր կարող կասեցնել։

1920 թ. ապրիլի 28-ին Ադրբեջանում, նոյեմբերի 29-ին Հայաստանում, իսկ 1921 թ. փետրվարի 25-ին Վրաստանում աշխատավորները սովետական Ռուսաստանի կարմիր բանակի օգնությամբ տապալեցին մուսավաթականների, դաշնակցականների և մենշևիկների կառավարությունները և բարձրացրին մեծ Հոկտեմբերի դրոշը։

Հոկտեմբերյան հեղափոխության դեկլարացիաների և դեկրետների հիման վրա, անշեղորեն իրականացնելով ազգերի ինքնորոշման իրավունքը, ստեղծվեցին ադրբեջանական, հայկական և վրացական սովետական հանրապետությունները։ Բացվեց այդ երկրների ժողովուրդների պատմության նոր էջը։

Հոկտեմբերի գաղափարների իրականացման շնորհիվ Անդրկովկասի ժողովուրդները բռնեցին ազգային և սոցիալական վերածնության ուղին։ Շահագործող դասակարգերը և նրանց հովանավորող օտարերկրյա գաղութարարները վտարվեցին Հայաստանից, Վրաստանից և Ադրբեջանից։ Ստեղծվեց և գնալով ամրապնդվեց այդ երկրների ժողովուրդների ազգային, սովետական պետականությունը։

Ադրբեջանական, հայկական և վրացական սովետական հանրապետությունները մերժեցին նախասովետական ժամանակների բուրժուական սոցիալ-քաղաքական կարգերը. յուրաքանչյուր հանրապետություն ընդունեց իր կյանքի հիմնական օրենքը՝ սահմանադրությունը, մշակված Վ. Ի. Լենինի ղեկավարությամբ ստեղծված սովետական Ռուսաստանի առաջին սահմանադրու-

---

20 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 27, էջ 562։

թյան սկզբունքների հիման վրա, հաշվի առնելով տեղական առանձնահատկությունները։ Հոկտեմբերյան հեղափոխության գաղափարները իրականացվեցին սովետական հանրապետություններում, մարմնավորվեցին կյանքում։

Հայ, վրաց և ադրբեջանական ժողովուրդները սովետական կարգերի օրոք հիմնովին, սոցիալիստականորեն վերակազմեցին իրենց տնտեսական ու քաղաքական կյանքը, մշակույթը, ազգային հարաբերությունները։ Սոցիալիզմի հաղթանակը ոչնչացրեց մարդու շահագործումը մարդու կողմից, վերացան ուրիշի աշխատանքի հաշվին ուռճացող դասակարգերը, ստեղծվեց հասարակության դասակարգային միատարրություն։ Սոցիալիզմն ընդմիշտ պատմության գիրկը թողեց այդ ժողովուրդների կուլտուրական հետամնացությունը, ազգային սահմանափակ և մեկուսացված վիճակը, քաղաքակրթության բարիքներից զուրկ լինելը։ Լայն զարգացում ապրեցին նրանց մշակույթը, գիրը, գրականությունը, գիտությունը, արվեստը, վերակառուցվեցին քաղաքներն ու գյուղերը, կենցաղն ու ապրելակերպը։

Մեծ Հոկտեմբերի գաղափարների իրականացման շնորհիվ ընդմիշտ վերացվեցին շահագործող վերնախավերի կողմից Անդրկովկասի ազգերի միջև հաճախ բորբոքվող ատելությունն ու թշնամանքը, հաստատվեցին եղբայրական, փոխադարձ հարգանքի և համերաշխության հարաբերություններ։ Ազգային հարցի լուծման սովետական ուղին, մեծ Հոկտեմբերի հուչակած ազգային քաղաքականությունն ապահովեցին Անդրկովկասի հին ազգերի վերածումը նոր սոցիալիստական ազգերի, որոնք կազմում են սովետական ժողովուրդ պատմական նոր ընդհանրության բաղկացուցիչ մասը։

Հոկտեմբերը հիրավի երիտասարդացրեց Անդրկովկասի հին ազգերը, նրանց պատմական ավանդույթները, հոգևոր մշակույթը։

ՍՄԿԿ XXV համագումարում կուսակցության Կենտկոմի հաշվետու զեկուցման մեջ ասված է. «Անցած 60-ամյակի կարևորագույն արդյունքն է սովետական մարդը։ Մարդ, որը կարողացավ ազատությունը նվաճելուց հետո այն պաշտպանել ամենածանր մարտերում։ Մարդ, որը կառուցեց ապագան, չխնայելով ուժերը և դիմելով ամեն մի զոհաբերության։ Մարդ, որը անցնելով բոլոր փորձությունների միջով, ինքն էլ փոխվեց անճանաչելիորեն, իր մեջ միացնելով գաղափարական համողվածությունն ու հսկայական կենսական եռանդը, կուլտուրան, գիտելիքները և դրանք կիրառելու կարողությունը։ Դա մի այնպիսի մարդ է, որը լինելով ջերմ հայրենասեր, եղել է և միշտ կլինի հետևողական ինտերնացիոնալիստ»[21]։

ВЕЛИКИЙ ОКТЯБРЬ И ЗАКАВКАЗЬЕ

АРАМАИС МНАЦАКАНЯН

Резюме

Победа Октября нашла широкий отклик среди рабочих, крестьян и солдат Закавказья. Во многих городах края и гарнизонах были созданы Советы рабочих, крестьянских и солдатских депутатов. Бакинский Совет решил взять власть в свои руки, была создана Бакинская Коммуна — цитадель советской власти в крае.

21 «ՍՄԿԿ XXV համագումարի նյութերը», Երևան, 1976, էջ 131։

Однако буржуазные партии меньшевиков, мусаватистов и дашнаков сколотили антисоветский блок, который противостоял распространению влияния Октябрьской революции в Закавказье. С помощью германо-турецких и антантовских империалистов они организовали контрреволюционные вооруженные силы, подавили революционные Советы рабочих, крестьянских и солдатских депутатов, свергли Бакинскую Коммуну, создали Азербайджанскую, Армянскую и Грузинскую буржуазные республики. Опыт истории показал, что национальная буржуазия и возглавляемые ею республики оказались абсолютно неспособными решить самые насущные вопросы социального и национального освобождения народов Закавказья. Единственный верный путь спасения народов Закавказья открыла Октябрьская революция. Победа Советской власти в Азербайджане, Армении и Грузии и создание советских республик Закавказья обеспечили их социально-политическое и экономическое развитие по социалистическому пути и подлинное возрождение армянского, азербайджанского и грузинского народов.